ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՌՈՒՍԹԱՎԻ 2»-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՆՁՆՎԵԾ ՔԻԲԱՐ ԽԱԼՎԱՇՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Գերագույն դատարանի Մեծ պալատը գործը քննարկեց դատարանի ինը դատավորների մասնակցությամբ անցկացված նիստում, որը նախագահում էր Գերագույն դատարանի նախագահ Նինո Գվենետաձեն:

Դատարանի որոշմամբ, որպես հեռուստաընկերության բաժնետոմսերի սեփականատերեր, չեղարկվել են Լեւան Քարամանիշվիլու՝ 22, Գիորգի Քարամանիշվիլու՝ 18, «Վրաստան հեռուստաընկերություն» ՍՊԸ-ի՝ 51 եւ Նինո Նիժարաձեի՝ բաժնեբանակությունները: Դատարանի որոշմամբ, «Ռուսթավի 2» հեռուստատեսության բաժնետոմսերի 60 տոկոսի սեփականատեր է հայտարարվել Քիբար Խալվաշին, իսկ 40 տոկոսինը՝ «Պանորամա» ՍՊԸ-ն:

Գերագույն դատարանի որոշումը համարվում է վերջնական եւ բողոքարկման ենթակա չէ: Այսպիսով, դատարանի որոշմամբ, ուժի մեջ մնաց դատական նախնական ատյաններում ընդունած որոշումը, ըստ որի, «Ռուսթավի 2»-ի սեփականության իրավունքը վերադարձվել էր նախկին սեփականատեր, գործարար Քիբար Խալվաշուն:

Ինչպես նշեցին հեռուստաընկերության փաստաբանները, իրենք մտադիր են մարդու իրավունքների Եվրոպական դատարանին բողոքարկել վերոնշյալ որոշումը:

Հիշեցնենք, որ Վրաստանի ամենավարկանիշային «Ռուսթավի 2» հեռուստաընկերության գործի քննարկումը մեկնարկել էր 2015 թվականի ամռանը, երբ հեռուստաընկերության նախկին սեփականատերերից մեկը՝ գործարար Քիբար Խալվաշին, հեռուստաընկերությունն իր սեփականության ներքո վերադարձնելու նպատակով դիմեց Թբիլիսիի քաղաքային դատարանին:

2015 թվականի նոյեմբերին առաջին ատյանի դատարանը բավարարեց այդ հայցը եւ որոշում ընդունեց հօգուտ Խալվաշու: Հեռուստաընկերության ներկայիս սեփականատերերը այդ որոշումը բողոքարկեցին վճռաբեկ դատարանում, թեպետ դատավոր Նատա Նազգաիձեն 2016 թվականի հունիսին առաջին դատարանի որոշումը թողեց ուժի մեջ: Դրանից հետո, «Ռուսթավի 2»-ի իրավաբանները որոշումը բողոքարկեցին Գերագույն դատարանում, որտեղ քննարկումից հետո որոշում էր ընդունվել գործը փոխանցել Գերագույն դատարանի մեծ պալատին:

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ՄԵԴԻԱՊԼՅՈՒՐԱԼԻԶՄԸ ԱՅՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆ Է, ՈՐՆ, ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ, ԱՌՆՉՎՈՒՄ Է ՄԵՐ ԹԻՄԻՆ»

- Ով լինի սեփականատերը, ինչպես էլ բաժանված լինեն սեփականության իրավունքները լրատվական տարածքում, պետք է պաշտպանված լինի մեդիապլյուրալիզմը: Դա նշանակալից է,- մեկնաբանելով «Ռուսթավի 2» հեռուստաընկերության հարցով Գերագույն դատարանի որոշումը, հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն: Նրա խոսքով, անկախ գործընթացների զարգացումից, մեդիապլյուրալիզմը պետք է լինի ապահովված եւ յուրաքանչյուր լրագրողի, բոլոր հեռուստաալիքների, բոլոր լրատվամիջոցների լրագրողների շահերը պետք է լինեն պաշտպանված:

- Չեմ կարող չնշել, որ մինչ օրս մեդիապլյուրալիզմը մեր իշխանության, «Վրացական երազանքի» նշանակալի ձեռքբերումներից է: Մենք հիշում ենք՝ այդ առումով ինչպիսին էր իրավիճակը մինչեւ 2012 թվականը: Գործում էին երեք ազգային հեռուստաալիքներ, որոնք լրիվությամբ վերահսկվում էին այն ժամանակվա կառավարող «Ազգային շարժում» կուսակցության կողմից: Եվ այդ իրավիճակը արմատականորեն փոխվեց 2012 թվականից հետո: Մեդիապլյուրալիզմը այն կարեւորագույն ձեռքբերումն է, որը, առաջին հերթին, առնչվում է մեր թիմին: Ելնելով դրանից՝ մենք առանձնակի զգուշությամբ ենք մոտենում այդ հարցին: Հետեւաբար, մեզ համար նշանակալից է, որ Վրաստանում, անկախ գործընթացների զարգացումից, մեդիապլյուրալիզմը լինի պաշտպանված: Մենք խորհրդարանի իրավասությունների շրջանակներում, բնականաբար, ամեն ինչ կանենք: Դա մեր դիրքորոշումն է,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

ՆԻԿԱ ԳՎԱՐԱՄԻԱՆ ՔԻԲԱՐ ԽԱԼՎԱՇՈՒՆ ԱՌԱՋԱՐԿԵԼ Է ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔԸ ՎԱՃԱՌԵԼ ԿՈԼԵԿՏԻՎԻՆ

«Ռուսթավի 2»-ի գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիան Գերագույն դատարանի որոշման կապակցությամբ հրավիրած մամլո ասուլիսում, Քիբար Խալվաշուն առաջարկեց հեռուստաալիքը վաճառել այդտեղ աշխատող կոլեկտիվին:

- Քանի որ պաշտոնապես հայտարարվել է, որ «Ռուսթավի 2»-ի խմբագրական քաղաքականության պահպանումը նշանակալից է, եւ քանի որ «ՏՎ-1»-ում Քիբար Խալվաշին հանդես եկավ հայտարարությամբ, որ դա իր համար բիզնեսի հարց է, ու ինքը մտադիր է «Ռուսթավի 2»-ը վաճառել, մեր թիկունքում կան մարդիկ, ում կողքին այսօր կանգնած է «Ռուսթավի 2»-ը: Հեռուստաընկերությունը հանձնեք կոլեկտիվին, եթե իրականում ցանկանում եք եւ չեք ստում, որ չեք ուզում երկրում հեռուստատեսությունը լինի միաձայն, «Ռուսթավի 2»-ը փոխանցեք կոլեկտիվին: Ինչ վերաբերում է Քիբար Խալվաշու կոմերցիոն շահերին, ապա նա դատարանում վիճարկում էր 7 միլիոն լարիից մի փոքր ավելի գումար: Մենք հաշվել ենք՝ այսօրվա կուրսով դա կազմում է շուրջ 4209397 դոլար: Գումարի մի մասը նա ստացել է, մնացած 3944397 դոլարը մենք կվճարենք: Չ՞է որ նա հեռուստաընկերությունը վաճառելու ցանկություն է հայտնել:

ՎՐԱՆՆԵՐ՝ «ՌՈՒՍԹԱՎԻ 2»-Ի ՏԱՐԱԾՔՈՒՄ

Մարտի 3-ին «Ռուսթավի 2» հեռուստաընկերության շենքի դիմաց սկսել են տեղադրել վրաններ: Նման որոշում ընդունել են համակարգման խորհրդի ներկայացուցիչները, ում հայտարարությամբ վրանները կվերածվեն յուրատեսակ շտաբի, որտեղ կմշակվեն առաջիկա ծրագրերը:

Նշենք, որ Գերագույն դատարանի որոշումից անմիջապես հետո, «Ռուսթավի 2»- ի մոտ հավաքվեցին նրա կողմնակիցները: Նրանք բողոքարկում են դատարանի որոշումը, ըստ որի, հեռուստաընկերության սեփականության իրավունքը հանձնվել է Քիբար Խալվաշուն:

ՈՐ ՉԶՐԿՎԵՆՔ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԳՈՐԾԱՐԿՎԻ ՄԻՆՉԵՎ ՏԱՐԵՎԵՐՋ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՓՈՂՈՑՈՒՄ

Ամենայն հավանականությամբ, վարորդական վկայականի 100 միավորի համակարգը կգործարկվի մինչեւ տարեվերջ:

Վրաստանի խորհրդարանը կրկին անդրադարձավ «Ճանապարհային երթեւեկության մասին» օրենքում ծրագրված փոփոխությունների եւ դրա հետ կապված օրինանախագծերի քննարկմանը: Ինչպես հայտարարեց խորհրդարանական մեծամասնության լիդեր Արչիլ Թալակվաձեն, ամենայն հավանականությամբ, օրենսդրական փոփոխությունների փաթեթը, որը նախատեսում է վարորդական վկայականի 100 միավորի համակարգի ներդրում, կընդունվի գարնանային նստաշրջանի շրջանակներում: Նա հրաժարվեց կոնկրետացնել վերոնշյալ փոփոխությունների կիրարկման ժամկետը, թեպետ ընդգծեց, որ նոր կարգավորումները, ենթադրաբար, ուժի մեջ կմտնեն ընթացիկ տարվա աշնանը:

- Հնարավոր է խստացվեն վարչական իրավախախտումները, որոնք դառնում են ավտովթարների ծագման պատճառ: Վարորդական իրավունքի խստացման քննությունները կանցկացվեն երթեւեկության իրատեսական կարգում, ինչն է՝ ավելի կբարձրացնի վարորդների որակավորումը,- նշեց Արչիլ Թալակվաձեն եւ հավելեց, որ այլ փոփոխությունների հետ միասին, ծրագրվում է միավորների համակարգի ներդրումը, որի շնորհիվ տարվա ընթացքում նրանք, ովքեր անմիջականորեն տուգանվել են պարեկային ոստիկանների կողմից, կկորցնեն միավորներ եւ 100 միավորի լիմիտի սպառումից հետո, նրանց վարորդական վկայականի կիրարկումը կդադարեցվի: Այդ համակարգի կիրարկմամբ, նույնիսկ այն վարորդները, ում համար տուգանքի վճարումը հիմնախնդրային չէ, առավել մեծ պատասխանատվություն կզգան,- հայտարարեց Արչիլ Թալակվաձեն:

Ինչպես պարզաբանեց պատգամավորը, բալային համակարգի ներդրմամբ մեկ տարվա ընթացքում այն վարորդները, ովքեր անմիջականորեն կտուգանվեն պարեկային ոստիկանության կողմից, կկորցնեն ե՛ւ այդ միավորները, ե՛ւ սահմանված լիմիտի սպառումից հետո, ստիպված կլինեն քննություն հանձնել վարորդական իրավունքի ստացման համար:

- Սույն համակարգը կպաշտպանի ճանապարհային անվտանգությունը եւ մեր քաղաքացիներին՝ նաեւ այն դեպքում, երբ կարգը խախտող վարորդը համոզված կլինի նրանում, որ մոտակայքում պարեկային անձնակազմ չկա,- հավելեց Արչիլ Թալակվաձեն:

Նրա պարզաբանմամբ, ամենայն հավանականությամբ, կխստացվի այն իրավախախտումների վարչարարությունը, որոնք դառնում են ավտովթարների գլխավոր պատճառ (արագության գերազանցում, խուսանավման կարգի խախտում, ալկոհոլի ազդեցության տակ մեքենայի վարում եւ այլն):

- Խստացվում է օրենսդրությունը նաեւ հետիոտների պաշտպանության եւ ավտոտրանսպորտով երեխաների փոխադրման անվտանգության ուղղությամբ,- հավելեց խորհրդարանական մեծամասնության լիդերը:

Վերոնշյալ փոփոխություններին զուգընթաց, Ներքին գործերի նախարարությունը ձեռնամուխ է եղել քաղաքների փողոցներում եւ ճանապարհներին նոր «խելացի» տեսախցիկների տեղադրմանը: Այդ տեսախցիկները անմիջականորեն կարձագանքեն ճանապարհային կանոնների խախտումներին, եւ դրանք միացված կլինեն կառավարման միասնական կենտրոնին, որն արդեն հիմնվել է:

Նշենք, որ վերոնշյալ փոփոխություններից բացի, ծրագրված բարեփոխումները նախատեսում են նաեւ առանց կոնտակտի պարեկության ներդրում, ինչը Եվրոպայում եւ Ամերիկայում փորձարկված մոդել է ու նախատեսում է քաղաքացիական հատուկ պետհամարանիշերով մեքենաներով պարեկության եւ նկարահանման արդյունքներով տուգանքներ: Ներդրվում է նաեւ վարորդական իրավունքների հանձնման համար իրական երթեւեկության պայմաններում քննության հանձնման համակարգը: Ամենայն հավանականությամբ, վարորդական վկայական ստանալ ցանկացողները ստիպված կլինեն քննությունը հանձնել իրատեսական երթեւեկության պայմաններում, փողոցում:

Ինչպես նշեց խորհրդարանական մեծամասնության լիդերը, դա նշանակալի բարեփոխում է, որը խորհրդարանն ու կառավարությունը կիրականացնեն ոչ կառավարական կազմակերպությունների ներգրավմամբ, եւ այն իրեն զգացնել կտա կիրարկման առաջին իսկ ամիսներից:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆՑՅԱԼ ՏԱՐԻ ՈՉ ՍԹԱՓ ՎԻՃԱԿՈՒՄ ՄԵՔԵՆԱՆ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՎԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 8 ՀԱԶԱՐ ՎԱՐՈՐԴ

Անցյալ տարի ալկոհոլային ազդեցության ստուգման ենթարկված 30655 վարորդներից 8 հազարից ավելի վարորդներին՝ սահմանված տուգանքի հաշվին, պետական բյուջե է մուտք գործել 8 914 400 լարի:

Ինչպես տեղեկացնում են ՆԳ նախարարության վիճակագրական տվյալները, 2016 թվականին ալկոհոլի ազդեցության տակ մեքենան վարելու համար տուգանվել է 30655 վարորդ, որից 22538-ը առաջին անգամ է նկատվել նման խախտման մեջ եւ, օրենսդրության համաձայն, վեց ամսով զրկվել են վարորդական իրավունքից: Ինչ վերաբերում է մնացած 8 հազարից ավելի վարորդներին՝ տուգանվել են ոչ սթափ վիճակում մեքենան վարելու, վարորդական իրավունքից զրկված պայմաններում, հարբած վիճակում մեքենան վարելու, նախօրոք տեղեկանալով ալկոհոլի ազդեցության ներքո գտնվող անձին տրանսպորտային միջոցի հանձնման եւ նման այլ իրավախախտումների համար: Վիճակագրության համաձայն, բոլորից մեծ տուգանքը՝ 3508000 լարի սահմանվեց այն վարորդներին, ովքեր առանց վարորդական իրավունքի մեքենան վարել են ոչ սթափ վիճակում: Իսկ վերոնշյալ իրավախախտումը կրկնելու համար, 669 վարորդ բյուջե է մուծել, ընդհանուր առմամբ, 1 003 000 լարի:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՔԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊ

ԱՐԱԳ ՍՆՈՒՆԴԸ ՇԱՏ ՈՒՏԵԼՈՒ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Կցանկանայի հստակեցնել՝ ճի՞շտ է արդյոք, որ արագ սննդի մեջ կան որոշ թմրանյութեր, որոնք ստիպում են էլի ուտել:

Մ. Վարդանյան

Թբիլիսի

Որեւէ հատուկ թմրանյութ, իհարկե չկա, սակայն մարդու օրգանիզմի վրա նմանօրինակ կերակուրների ազդեցությունն ուսումնասիրող գիտնականների կարծիքով, դրանցում չափազանց մեծ քանակությամբ պարունակվող ճարպերի եւ շաքարի պատճառով, առաջանում է քիմիական կախվածություն, որը մոտ է թմրանյութերի կամ ծխախոտի նկատմամբ ունեցած թուլությանը: Այսինքն՝ հաճախակի այցելությունները սննդի արագ սպասարկման կետեր հանգեցնում են հիվանդագին կախվածության: Արագ սննդի կետերում հաճախակի սնվող մարդու ուղեղում տեղի են ունենում քիմիական գործընթացների փոփոխություններ, ինչպես հաճախ լինում է որոշ թմրանյութերի ազդեցությամբ: Այս փաստի օգտին է վկայում նաեւ այն, որ արագ սննդի սիրահարները չեն կարողանում վերադառնալ նորմալ սննդին կամ խիստ սննդակարգ պահպանել:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ ՄԱՉԱԹԱՓՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Ընդամենը 24 տարեկան եմ, սակայն նկատել եմ, որ արագ կերպով սկսում եմ ճաղատանալ: Գուցե խորհուրդ տաք՝ ինչպե՞ս պայքարել դրա դեմ:

Ս.Պ.

Ախալքալաքի

Առողջական խնդիրներ ունենալիս՝ ցանկանում ենք ազատվել ախտանշաններից եւ ոչ թե հիվանդության պատճառներից: Մազաթափության պատճառները հայտնաբերելուց հետո, կարելի է փորձել վերականգնել մազերի աճը: Շատ լավ միջոց է գլխի մաշկի մերսումը: Մերսումը նպաստում է արյան շրջանառության լավացմանը:

Արյան միջոցով մազարմատը սնուցվում է տարբեր վիտամիններով հարուստ նյութերով: Իսկ եթե մերսումն էլ կատարվի գերչակի յուղի օգնությամբ, արդյունքը ավելի գոհացնող կլինի: Բոլորին հայտնի է՝ առաջներում մազերը լվանում էին սեւ օճառով, իսկ մազերին՝ որպես բալզամ, մածուն էին քսում: Եվ իսկապես այն օգնում է, վերջում կարելի է մի գդալ մածուն քսել գլխին ու լվանալ մազերը: Մածունից հետո պետք չէ նորից շամպուն կամ օճառ անել: Այն, մազերը ամրացնելուց բացի, լավ փայլ է հաղորդում մազերին: Երբեք չի կարելի մազերը սանրել թաց վիճակում: Եվ աշխատեք քիչ օգտվել մազահարդարումից, արհեստական գանգրացումից ու քիմիական տարբեր նյութերից:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ԻՆՉՊԻՍԻՆ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԼԱՎ ՂԵԿԱՎԱՐԸ

Լավ ղեկավարը լիարժեք փոխադարձ համաձայնության մեջ պետք է լինի այն խմբի հետ, որի ղեկավարն է: Նա պետք է խմբի հետ նույն կյանքով ապրի եւ գնա առջեւից, որի համար նա պետք է նորմալ բնավորություն եւ անհատականություն ունենա:

Նորմալ բնավորություն ունեցող մարդը պետք է ունենա հետեւյալ արժանիքները՝ աշխատասիրություն, գիտակցություն, ազնվություն, իր խոսքին հավատարմություն եւ հաստատուն սովորույթներ: Իսկ անհատականությունը մարդու կողմից սեփական ընդունակություններն ու եռանդը այնպիսի սովորությունների եւ գործողությունների վերածելու աստիճանն է, որոնց օգնությամբ նա կարողանում է ազդել այլ մարդկանց վրա:

Ակնառավոր անհատականություն լինելու համար պետք է ոչ միայն բազմատեսակ վարպետություն ունենալ, այլ հարաբերական գերազանցություն մի քանի բնագավառներում եւ անժխտելի գերազանցություն մեկ բնագավառում: Հիմնական գերազանցության պետք է հասնել պրոֆեսիոնալ գործունեության բնագավառում, իսկ հարաբերական՝ սպորտում, սիրած զբաղմունքներում եւ ընդհանուր իմացության ոլորտում: Ղեկավարը պետք է իմանա իր գործը, որեւէ բնագավառում պետք է լինի մասնագետ եւ բավականաչափ ճկուն միտք ու լայն գիտելիքներ ունենա, որպեսզի կարողանա գրավիչ ձեւով պատմել ամեն ինչ: Այն մարդը, որը չի կարողանում տիրապետել ինքն իրեն, չի կարող կառավարել մարդկանց:

«Ես չեմ կարող» բառերը պետք է ջնջվեն այն մարդու բառապաշարից, ով ձգտում է հաջողակ ղեկավար դառնալ: Հաջողակ ղեկավարն այն մարդն է, ով կարողանում է կյանքում առաջինը նկատել գլխավորը: Վտանգի պահին անհրաժեշտ է ունենալ համարձակություն, ինքնավստահություն եւ սառնասրտություն: Ղեկավարը պետք է հավատ ունենա եւ կրկնի ինքն իր համար. «Ես անպայման կհասնեմ հաջողության»:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐՋԱՆԻԿ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Արդեն բավական ժամանակ է՝ հանդիպում եմ հաճելի արտաքին ունեցող ու խելացի երիտասարդի հետ: Մենք պատրաստվում ենք ամուսնանալ: Ուզում եմ՝ որքան կարելի է երջանիկ ապրել: Գոյություն ունե՞ն արդյոք որոշակի կանոններ, որոնք պահպանելով՝ կարող ես գեղեցիկ ընտանիք ունենալ եւ, որքան հնարավոր է, խուսափել ավելորդ խնդիրներից ու տհաճ առօրեական վեճերից:

Ա.Ս.

Թարմ աչքով նայեք ձեր հարաբերություններին

Իրականում ոչ միշտ են ռոմանտիկ հարաբերությունները զգալի ջանքեր պահանջում: Թարմ աչքով նայեք ձեր հարաբերություններին: Արդյոք ձեր զուգընկերն իրեն անփույթ չի՞ պահում ձեզ հետ շփվելիս, ուշադի՞ր է ձեր նկատմամբ, կարո՞ղ եք ձեզ ազատ ու բնական զգալ նրա կողքին գտնվելիս: Դուք միմյանց մեջ դրական կողմե՞ր եք հայտնաբերում: Այս հարցերի շուրջ մտորելով՝ կարելի է հասկանալ, թե արդյոք ցանկանո՞ւմ եք շարունակել նման հարաբերությունները:

Սկսեք ձեր սեփական երջանկությունից

Մարդկանց մեծամասնությունը չարաչար սխալվում է՝ կարծելով, որ, հանդիպելով իր միակին, անմիջապես կերջանկանա: Իրականում հետազոտությունները ցույց են տվել, որ ամենաերջանիկ մարդիկ փորձում են հաճույք ստանալ ոչ միայն ռոմանտիկ հարաբերություններից, այլեւ նախընտրում են զբաղվել այն ամենով, ինչ իրենց դուր է գալիս: Եթե ապրեք ձեր բնական կյանքով, դա թույլ կտա հարաբերություններում միայն լավն ու դրականը տեսնել:

Արտասովոր քայլեր կատարեք զուգընկերոջ հետ միասին

«Մարդն ամեն ինչին հարմարվում է»: Այս ասացվածքը ցույց է տալիս մարդու իրական էությունը: Այն, ինչ հետաքրքիր ու սպասված է առաջին ժամադրության ժամանակ, կարող է ձանձրալի թվալ համատեղ կյանքի երրորդ տարում: Հետազոտությունը ցույց է տվել, որ այն զույգերը, ովքեր մշտապես ներգրավված են ինչ-որ հետաքրքրաշարժ գործերում, ավելի մեծ ընտանեկան բավարարվածություն են զգում: Բացի այդ, նորանոր գործողությունները նպաստում են ուղեղի այն հատվածների ակտիվացմանը, որոնք պատասխանատու են ուրախության հորմոնի արտադրման համար:

Սովորեք ձեր զուգընկերոջ սիրո լեզուն

Վարվեք մյուսների հետ այնպես, ինչպես իրենք կցանկանային, որ վարվեիք:

Ապրեք ներկայով

Կենտրոնացեք ներկայիս հարաբերությունների, ներկա պահի վրա եւ հաճույք ստացեք իրական զգացողություններից:

Առավելագույնս ուշադիր եղեք լավ նորությունների նկատմամբ

Հետազոտությունը ցույց է տվել, որ այն, թե ինչպես ենք արձագանքում մեր զուգընկերոջ համար լավ նորությանը, կարող է կա'մ օգնել մտերմությանը, կա'մ խանգարել: Ակտիվություն եւ հետաքրքրվածություն ցուցաբերեք, երբ նա կիսվում է ձեզ հետ իր հաջողություններով: Դա կամրապնդի ձեր կապը:

Հպվեք միմյանց ամեն օր

Մեր ծննդյան առաջին իսկ պահից մեզ անընդհատ ինչ-որ մեկը հպվում է: Հպվելու գործառույթը կապված է անվտանգության, վստահության եւ աջակցության զգացողության հետ: Մարդիկ, ովքեր ավելի շատ են ֆիզիկական աջակցություն ստանում զուգընկերոջից, ավելի երջանիկ են հարաբերություններում:

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ

Մի հասարակ կոշիկ գնելիս, տասն անգամ փորձում ենք, իսկ ամուսնանում ենք փակ աչքերով: Ամուսնությունը բախտախաղ չէ, եւ հաճախ դառնում է դժնդակ ողբերգություն:

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆ
(1888-1968)
Հայ անվանի դերասան

Երբ ագռավը վարդ է գտնում, սոխակ է նա կարծում իրեն:

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ
(1172-1216)
Վրաց բանաստեղծ

Ժամանակը մտավոր աշխատանք կատարողի կապիտալն է:

ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ
(1799-1850)
Ֆրանսիացի գրող

Մարդ ավելի քիչ սխալներ կգործեր, եթե իմանար, թե ինքը հատկապես ինչ գիտի:

ՊՈՒԲԼԻԼԻՈՍ ՍԻՐՈՍ
(մ.թ.ա. 1-ին դար)
Հին հռոմեացի բանաստեղծ

Ամենավատ թանաքն անգամ ավելի լավ է, քան ամենալավ հիշողությունը:

ՉԻՆԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔ

Սերն այնպիսի ակնոցներ է կրում, որոնց միջոցով պղինձն էլ ոսկի կերեւա:

ՍԵՐՎԱՆՏԵՍ
(1547-1616)
Իսպանացի նշանավոր գրող

Սերը հրաշալի ծաղիկ է, բայց պահանջվում է խիզախություն անդունդի եզրին մոտենալու ու նրան պոկելու համար:

Ա.ՓՈՒՐԹՈՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ *Ոստիկանը դիմում է ամրագոտին չամրացրած վարորդին.*

- Ինչո՞ւ եք վարում առանց ամրագոտու:

Վարորդը.

- Կարելի է կարծել, թե դուք ուրախ չեք դրա համար...

☺ *Դատավորը՝ երիտասարդ գողին.*

- Դրամարկղի ապակին կոտրելիս չէի՞ր մտածում ապագայիդ ու ընտանիքիդ մասին:

- Հենց դրա մասին էլ մտածում էի:

☺ *Մի թավջութակահար գնում է գյուղերից մեկը՝ համերգի: Գյուղացիները, ծանձրանալով, աստիճանաբար դուրս են գնում դահլիճից: Մնում է մի տատիկ, որը համբերատար լսում է նվագողին: Երաժիշտն էլ ոգեւորված նվագում է...*

Մեկ էլ հարցնում է.

- Մայրի'կ ջան, երեւի դասական երաժշտություն շատ ես սիրում, հա՞:

Տատիկն ասում է.

- Բալա ջան, էդ տակիդ աթոռը իմն ա, սպասում եմ՝ վերջացնես, տանեմ:

☺ *Գիտե՞ք՝ ինչու ժամանակակից տղաները չեն լացում... Նրանք վախենում են, որ տուշը կհոսի:*

☺ *Գժերը ինքնաթիռով գնում են... Որոշում են ինքնաթիռում ֆուտբոլ խաղալ: Սկսում են խաղալ: Օդաչուն մոտենում է մի գժի ու խնդրում, որ ասի մյուսներին՝ այլեւս չխաղալ: Քիչ անց օդաչուն այլեւս աղմուկ չի լսում: Այդ գժին կանչում է իր մոտ ու հարցնում.*

- Ի՞նչ ասացիր նրանց, որ դադարեցրին խաղը:

- Ասացի,որ դուրսն ավելի ազատ է, այնտեղ թող խաղան:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՄԵՐՁԵՑՆԵԼ ԵՄ ԵՎ ԵԱՏՄ ԴԻՐՔԵՐԸ»

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, հանդես գալով Բրյուսելի «Կարնեգի» կենտրոնում, հայտարարեց, որ Հայաստանը պատրաստ է աջակցել Եվրամիության եւ Եվրասիական տնտեսական միության փոխշահավետ դիրքորոշումների մերձեցմանը:

- Հայաստանը կարող է դառնալ ամենահուսալի եւ ամենակարճ տարանցիկ ուղին, որը Պարսից ծոցը կկապի սեւծովյան նավահանգիստների հետ: Մենք երբեք մեր հարաբերությունները երրորդ երկրների հետ նախապայմաններով չենք հաստատել: Հայաստանի համագործակցությունը ԵԱՏՄ անդամ երկրների եւ Եվրամիության ասոցիատիվ գործընկեր Վրաստանի հետ վկայում են նոր, փոխշահավետ հարաբերությունների մասին,- հայտարարեց Հայաստանի նախագահը եւ հավելեց, որ Հայաստանը պատրաստ է դառնալ տարածաշրջանում կայուն գործընկեր, որը կաջակցի խոշոր երկրների միջեւ տարաձայնությունների հարթեցմանը, տնտեսական զարգացման ուղիների մշակմանն ու արդյունավետ ներդրումային քաղաքականության ձեւավորմանը:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ. ԱՅԺԵԳՐԵՐԻ ԱՋԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՈՒՐՋ ԱԿՆԿԱԼՎՈՒՄ ԵՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Բրյուսելյան այցի ընթացքում, Սերժ Սարգսյանը հանդիպումներ ունեցավ նաեւ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժան-Կլոդ Յունկերի, Եվրոպական միության արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Ֆեդերիկա Մոգերինիի, Եվրոպական խորհրդարանի նախագահ Անտոնիո Տայանիի, Եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) նախագահ Ժոզեֆ Դոլի հետ:

Աշխատանքային այցի շրջանակներում, Հայաստանի նախագահը հանդիպում ունեցավ նաեւ հայ համայնքի գործարար ներկայացուցիչների հետ:

ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՀԱՄԱՏԵՂԵԼԻ ԵՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՊԿ-ԻՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՏՕ-Ի ՀԵՏ

ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում կայացավ աշխատանքային այցով Բելգիայի Թագավորությունում գտնվող՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ:

Բանակցությունների ավարտից հետո հրավիրված համատեղ մամլո ասուլիսում, Հայաստանի նախագահը հայտարարեց, որ ժամանակը եւ պրակտիկան ցույց են տալիս, որ Հայաստանի անդամակցությունն այլ ռազմաքաղաքական կառույցներում եւ համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ ամբողջովին համատեղելի են:

- Անշուշտ, տարբեր նպատակներ են հետապնդում ե'ւ ՀԱՊԿ-ը, ե'ւ ՆԱՏՕ-ն, բայց մեր պրակտիկան խոսում է այն մասին, որ հնարավոր է, որպեսզի երկիրն իր ազգային անվտանգությունն ապահովելու համար համագործակցության եզրեր գտնի տարբեր ձեւաչափերում: Իմիջիայլոց ասեմ, որ, երբ Եվրամիության հետ բանակցություններ էինք վարում, եւ խոսքը գնում էր Եվրասիական տնտեսական միությանը մեր անդամակցության մասին, ու ԵՄ-ում որոշակի մտահոգություն էին հայտնում այս առիթով, մենք բերում էինք ՆԱՏՕ-ի օրինակը՝ ասելով, որ, լինելով ՀԱՊԿ-ի հիմնադիր անդամ, մենք 25 տարի է՝ համագործակցում ենք ՆԱՏՕ-ի հետ, եւ դրանից ոչ մի վատ բան չի պատահում: Այնպես որ, կարծում եմ մեր օրինակն ուսանելի է, եւ մենք շարունակելու ենք մեր այս քաղաքականությունը,- ամփոփեց Սերժ Սարգսյանը:

Իր կողմից Յենս Ստոլտենբերգը նշեց, որ ՆԱՏՕ-ի համար գործընկերությունները շատ կարեւոր են, հենց դրա համար էլ ՆԱՏՕ-ն ամրապնդում է գործընկերությունը Հայաստանի հետ:

Նրա տեղեկացմամբ, ՆԱՏՕ-ն Հայաստանի հետ ներկայումս համաձայնեցվում է Անհատական գործընկերության գործողությունների հեթական ծրագիրը, եւ մենք համաձայնեցման գործընթացում ենք: Ստոլտենբերգը շնորհակալություն հայտնեց Հայաստանին ՆԱՏՕ-ի տարբեր գործողություններում ու առաքելություններում ներդրում ունենալու համար:

Հայաստանի նախագահը ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգին հրավիրեց Հայաստան:

«ԳԱՐՈՒՆ» ԱՄՍԱԳԻՐԸ 50 ՏԱՐԵԿԱՆ Է

Տարիներ շարունակ հայ ընթերցողի սիրելի եւ անբաժան ուղեկիցը՝ «Գարուն»-ը, մարտի 1-ին դարձավ 50 տարեկան: 2016 թվականին, շուրջ մեկամյա ընդմիջումից հետո, վերահրատարակված ամսագիրը այսուհետ հասանելի կլինի ընթերցողների համար նաեւ համացանցային տիրույթում:

- Այս տարի պատրաստվում ենք ամսագրի էլեկտրոնային կայքն ստեղծել, որը յուրահատուկ տեղ կզբաղեցնի նաեւ մերօրյա գրական էլեկտրոնային կայքերի տիրույթում: Դրա միջոցով հնարավոր կլինի անմիջական շփում ապահովել ընթերցողների եւ ժամանակակից գրականության ներկայացուցիչների միջեւ: Կանցկացվեն նաեւ տարբեր միջոցառումներ,- հայտարարեց «Գարուն» ամսագրի գլխավոր խմբագիր, բանաստեղծ Աշոտ Գաբրիելյանը:

Ամսագրի 50-ամյակի կապակցությամբ վավերագրական ֆիլմ է նկարահանվելու, որում անդրադարձ կլինի «Գարուն»-ի անցած պատմությանը: Կինոնկարի պրեմիերային հրավիրվելու են ե'ւ հին, ե'ւ նոր գարունականները:

«Գարունի» գլխավոր խմբագիրն առանձնակի շեշտում է նախկին խմբագրապետերի՝ Վարդգես Պետրոսյանի, Անժիկ Հակոբյանի, Մերուժան Տեր-Գուլանյանի, Լեւոն Անանյանի ու Վարուժան Ավյազյանի հսկայական ներդրումը ամսագրի կայացման գործում, որի միջոցով հայտնի են դարձել գրական ոլորտի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են Հրաչյա Սարուխանը, Հակոբ Մովսեսը, Էդվարդ Միլիտոնյանը, Դավիթ Հովհաննեսը, Հովհաննես Գրիգորյանը, Մուշեղ Գալշոյանը եւ այլք:

«Գարուն» գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական անկախ ամսագիրը տպագրվել է Երեւանում 1967 թվականից:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՋՏԱՔԱՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ ՉԳՐԱՆՑՎԱԾ ԵՐԵՎՈՒՅԹ Է

ՀՀ ԱԻՆ Հիդրոմետ ծառայություն Օդերեւութաբանության կենտրոնի պետ Գագիկ Սուրենյանը մեկնաբանել է, թե ինչու օդի ջերմաստիճանը չի բարձրանում Արարատյան դաշտում, այն դեպքում, երբ փետրվարի 25-ի ցերեկը Բագրատաշենում օդի ջերմաստիճանը հասել է +20°-ի, Իջեւանում եւ Կապանում +17°-ի:

Գագիկ Սուրենյանը նշել է. «Կանխատեսված տաք օդային զանգվածների ներթափանցման արդյունքում, փետրվարի 28-ի ցերեկը Բագրատաշենում օդի ջերմաստիճանը հասել է +20°, Իջեւանում եւ Կապանում +17°, բոլոր լեռնային մարզերում 0...+5°, նույնիսկ Աշոցքում գրանցվել է դրական ջերմաստիճան +1°, Երեւանի բարձրադիր գոտում մինչեւ +5°»:

Արարատյան դաշտում նկատվում է բացառիկ երեւույթ, որը, ըստ մեր դիտարկումների, արխիվում տարվա այս ժամանակահատվածի հետ համեմատած, չի գրանցվել վերջին 100 տարիների ընթացքում:

Տաք օդային հոսանքների եւ երկրի մակերեւույթի սառը օդի շփումից կրկին առաջացել է մառախուղ, որը թույլ չի տալիս արեգակնային էներգիայի ներհոսքը դեպի Արարատյան գոգավորություն, ինչի արդյունքում օդի ջերմաստիճանը ցերեկը չի բարձրանում:

Նրա խոսքով, մարտին սպասվում է նորմայի սահմաններին մոտ ջերմաստիճան: Տեղումների քանակը եւս նորմային մոտ կլինի: Թեպետ մարտին սպասվում են նաեւ կլիմայական վայրիվերումներ: Կլինեն օրեր, երբ, արեւադարձային տաք օդային հոսանքների ներթափանցման հետ կապված, եղանակը կտաքանա, կլինեն օրեր, երբ արկտիկական ճակատներն իրենց հետ կբերեն ջերմաստիճանի նվազում եւ տեղումներ:

ՆԵՐՔԻՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Հայաստանում օտարերկրացիների ներքին անչնագրերը կհամարվեն անչը հաստատող փաստաթուղթ, եւ դրանցում որեւէ դրոշմ կամ նշում չի կատարվի, քանի որ վերջինիս արդյունքում ներքին անչնագրերն այդ պետություններում կկորցնեն իրենց վավերությունը: Այդ մասին կառավարության նիստում հայտարարեց արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը՝ ներկայացնելով «ՀՀ պետական սահմանային ռեժիմ սահմանելու մասին» ու «Անչը հաստատող փաստաթղթի մասին» կառավարության 702 եւ 767 նորմատիվային որոշումներում փոփոխություններ կատարելու նախագծերը: Նախարարի խոսքով, այս փոփոխությամբ, ըստ էության հնարավորություն է տրվում օտարերկրացիներին Հայաստանի տարածք մուտք գործել ներքին անչնագրերով, որն էլ կնպաստի զբոսաշրջության զարգացմանը:

ՀՆԱ-Ի ԱՃԻ ՏԵՄՊԸ ԿԱԶՄԵԼ Է 97,4 ՏՈԿՈՍ

2016թ. երրորդ եռամսյակում համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճի տեմպը, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, կազմել է 97,4 տոկոս: Վկայակոչելով Հայաստանի ազգային վիճակագրական տվյալները՝ նախորդ ժամանակահատվածի համեմատ, այն նվազել է 2,6 տոկոսով: ՀՆԱ-ի ծավալն ընթացիկ գներով 2016 թվականի երրորդ եռամսյակում կազմել է 1 տրլն 518 մլրդ 338.5 մլն դրամ, որից գյուղատնտեսության ծավալը՝ 378 մլրդ 915.6 մլն դրամ կամ ՀՆԱ-ում 25,0%: 2016թ. երրորդ եռամսյակում գյուղատնտեսության անկման տեմպը 3,4%-ային կետով գերազանցել է ՀՆԱ անկման տեմպը: Հաշվետու ժամանակահատվածում իրական ՀՆԱ-ն կազմել է 1 տրլն 523 մլրդ 992,3 մլն ՀՀ դրամ: ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով կազմել է 507 հազար 42 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՅՈՒՅԱՆԻՇԸ ԱՃԵԼ Է 6,5 ՏՈԿՈՍՈՎ

Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2017 թվականի հունվարին 6,5 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, անկում է գրանցվել միայն շինարարության ոլորտում: Շինարարության ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 5,3 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում 2017թ. հունվարին ցուցանիշը 13,6 տոկոսով ավելացել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6,2 տոկոսով: Արտաքին ապրանքաշրջանառության ծավալները, 2016թ. հունվարի համեմատ, աճել են 45,5 տոկոսով, ընդ որում՝ արտահանումն աճել է 35,4 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 51,4 տոկոսով:

ՏԱՐԱԳՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(3 մարտի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը:

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	485,50	488.00
ԵՎՐՈ	510.00	515.00
ՌՈՒԲԼԻ	8,22	8,39

Փետրվարի 24-ի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի կուրսը մնացել է անփոփոխ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՐՏ



4.03.2017. Սուրբ Թեոդորոս զորավարի հիշատակության օր

5.03.2017. Արտաքսման կիրակի

Մեծ Պահքի երկրորդ կիրակին կոչվում է նաեւ Արտաքսման: Նախապատմությունը հետեւյալն է. մարդն ունկնդիր լինելով Սատանայի խաբեբայական խոսքերին, պատվիրանազանց գտնվելով՝ համտեսեց արգելված պտղից: Որպես պատիժ՝ մարդն իհարկե, անմիջապես չմահացավ, սակայն զրկվեց Աստծո կողմից շնորհված անմահությունից եւ անիծվեց: Այսուհետ, մարդն իր քրտինքով պետք է վաստակի օրվա հացը, եւ կինը պետք է ցավով ու տառապանքով զավակ ունենա, եւ վերջում էլ ասվեց նրան. «...հող էիր ու հող կդառնաս» (Ծննդ.3.19):

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԹԲԻԼԻՍԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է

Թբիլիսիի քաղաքապետարանը մայրաքաղաքի բնակիչներին կոչ է անում անծանոթ անձանց չմուծել գումարներ, իբր մասնաշենքերի մուտքերի ախտահանման աշխատանքների համար: Ինչպես նշեցին քաղաքապետարանում, մայրաքաղաքի բազմաբնակարան շենքերի բնակարաններ պարբերաբար հայտնվում են անհայտ անձինք, ովքեր գումարներ են հավաքում, իբր շենքերի մուտքերի ախտահանման աշխատանքների համար:

- Կրկին անգամ հայտարարում ենք, որ այդ մարդիկ քաղաքապետարանի աշխատակիցներ չեն, եւ բնակչությանը կոչ ենք անում անորոշ ծառայությունների համար անծանոթ մարդկանց գումարներ չփոխանցել,- ասված է քաղաքապետարանի հայտարարության մեջ:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ, ՄԵՐ ՍԻՐԵԼԻՆԵՐ

ՄԵՐ ԽՈՐՆԱՐՀՈՒՄԸ, ՀԱՐԳԱՆՔԸ ԵՎ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՔԵԶ՝ ՄԱՅՐ, ԿԻՆ, ՔՈՒՅՐ

Աշխարհի տարբեր ժողովուրդների մայրության եւ կանանց նվիրված տոները սկիզբ են առել վաղնջական ժամանակներից: Հռոմեացիները այն կապում են Վեստ, հրեաները՝ Պուրիմ, իսկ հայերը՝ Անահիտ աստվածուհիների հետ: Այսօր էլ, քաղաքակիրթ աշխարհի այլեւայլ երկրներում տոնը ե'ւ օրացույցով, ե'ւ նշելու ավանդույթով տարբեր է: Սակայն, վստահաբար, ամենուրեք նույնն է օրվա խորհուրդը՝ խոնարհում, հարգանք, երախտագիտություն մոր, կանանց հանդեպ:

Մեր երկրում կանանց նվիրված երկու տոն ենք նշում. Մարտի 3-ը՝ Մայրության, Մարտի 8-ը՝ Կանանց միջազգային օր: Այս պատեհ առիթն օգտագործելով՝ ուզում եմ շնորհավորել մեր մայրերին, ուսուցչուհիներին գարնանային ամենագեղեցիկ տոների առիթով:

Սիրելի' ուսուցչուհիներ, դուք արժանի եք ամենաբարձր գնահատանքի, մեծարման, հարգանքի ու սիրո: Ժողովուրդն իմաստուն է, երբ ասում է, որ ուսուցիչը մեր երկրորդ մայրն է: Այո', դուք ոչ միայն նվիրումով եք կրթում ու դաստիարակում ձեր սաներին, այլեւ ցուցաբերում եք մայրական գորով, հոգածություն, ջերմություն՝ չտարբերելով նրանց ձեր սեփական զավակներից: Սիրելի' կանայք, ձեզանով է պայմանավորված մարդկային հարաբերությունների ներդաշնակությունը, ընտանիքի ամրությունն ու բարօրությունը: Մաղթում եմ անսպառ երջանկություն անձնական կյանքում, լավատեսություն, առաջընթաց աշխատանքային գործունեության մեջ եւ նվիրում գարնանաբույր ծաղիկներ:

Սիրով՝

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ

Հարգելի՝ խմբագրություն.

Իմ սիրելի «Վրաստան» թերթի միջոցով ուզում եմ շնորհավորել մեր երկրի բոլոր մայրերին՝ «Մոր օրվա» առթիվ: Ցանկանում եմ առողջություն եւ երջանկություն: Բանաստեղծությունս նվիրում եմ բոլոր մայրերին:

ՅՈՂԻԿ ԹԱՄԱԶՅԱՆ
Մառնեուլիի շրջան

գյուղ Գյուլիբաղ

Մորը այս կյանքում բոլորն են սիրել,
Աշխարհով չափել ու երկրպագել,
Երբ զայրացել ենք՝ կարծես թե ատել,
Ու երբ կորցրել՝ հավերժ ենք լացել:

Ամենքիս համար մայրը միակն է,
Աստծուց առաջ նա մեր աստվածն է,
Եթե Աստված կա միայն երկնքում,
Մայրը ծնվում է ամեն երկունքում:

Մայրերի համար երգեր են գազել
Նրա ծնկներին բոլորն են լացել
Եվ երբ շոյել է գլուխը նա մեր,
Մեր ամեն ցավին եղել է նա դեղ:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.«..., ինչո՞ւ ձկանց հետ պար չես բռնում մանկական» (Ռ.Պատկանյան): 4.Վրաց շինարար թագավոր: 10.«Բարի, գեղեցիկ, ... ընկերը մարդու» (Ջիվանի): 12.«Ես ... ելա ոգի առած, զարկի սրտիս լարերին» (Ավ.Իսահակյան): 13.Հայ կին ֆիդայի, Աղբյուր Սերոբի կինը: 14.... տարի, ... օր: 15.Մեսրոպյան այբուբենի տառ: 16.Նար-Դոսի «... Սարոյան» վիպակը: 19.Լեհ գրող Հենրիկ Սենկեւիչ «... երթաս»: 21.Ե'վ Ջիգարխանյանը, ե'ւ Խոստիկյանը: 23.Հայկական պար: 29.Հանրահայտ ավիակոնստրուկտոր, «Միգ-29» կործանիչի ստեղծողը՝ ... Միկոյան: 30.Օվկիանոսային հզոր ալիք: 31.Իսպանական ֆուտբոլային առաջատար ակումբ: 33.Ֆրանսիացի հանրահայտ գրող: 34.Ստորագրյալի լրացում: 37.Անգլիացի գրող Ջեկ Լոնդոն «Մարտին ...»: 40.«Ես ... եմ, մեղաց ծով եմ» (Հովնաթան): 43.Թբիլիսիում ծնված երգչուհի, կոմպոզիտոր Կ.Օրբելյանի երգերի կատարող Խոմյանցը: 45.Հումորի աստղ Եվգենի Պետրոսյանի կինը՝ ... Ստեպանենկո: 47.Իտալացի անվանի կոմպոզիտոր: 48.Անապատային տաք քամի: 49.Օժանդակ բայ: 50.Մթնոլորտային գազ: 51.Գր.Նարեկացու «Մատյան ողբերգությանը» ժողովրդի լեզվով: 54.Ֆ.Դոստոեւսկի «... եւ պատիժ»: 56.Ստեղծագործական կենտրոն: 58.Վրաց ճանաչված շախմատիստուհի ... Չիբուրդանիձե: 61.Իտալիայի քաղաքներից: 62.Շատ միս տվող: 63.Մակերեսի հնացած չափ: 64.Ճապոնիայի դրամական միավորը:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Գանայի մայրաքաղաքը: 3.Ամերիկյան հայտնի «էփլ» («Apple») կորպորացիայի հիմնադիր ... Ջոբս: 4.Տարրական դասարանների ուսուցչուհի: 5.Մամիկոնյան սպարապետ: 6.Հերոսուհի «Քաղաքում» ֆիլմում: 7....մար, ...նաք, ...վիշ: 8.Դատարկ, նանիր, փուչ: 9.Հայկական ֆիլմ «Ջորի ...»: 11.Հերոսուհի Ստ.Ջորյանի «Խնձորի այգին» պատմվածքում: 12.Լիխտենշտեյնի քաղաքամայրը: 17.«Ա՜խ, ..., ..., ..., քելե էրթանք դուռը բաց» (ժող. երգ): 18.Վարդանանց հերոսներից: 20.Քաղաք ՌԴ-ում, Սեւ ծովի ափին: 22.Ամերիկացի հայտնի դերասան ... Գիբսոն: 24.Վրաց նախկին վարչապետ ... Ժվանիա: 25.Հայերենի վերջածանց: 26.Երկարության չափ: 27.Վերդիի հայտնի օպերաներից: 28.«Ինձ ... Ջինզինով կոսին» (Գ.Սունդուկյան «Պեպո»): 29.Հայ պատմիչ ... Դավրիժեցի: 32.Ե'ւ թերակղզի, ե'ւ պետություն Աֆրիկայում: 35.Բանաստեղծ ... Սարյան: 36.Կշեռքի մաս: 38.Հայ անվանի դերասանուհի ... Նովենց: 39.Վրաց գրող ... Միշվելաձե: 40.Հովի. Թումանյանի հերոս: 41.... եւ ֆիզիոլոգիա: 42.Ասորեստանի թագուհի: 44.Գետ ՌԴ Սիբիրում: 46.Արեգակնային համակարգի մոլորակ (հայերեն անվանումը): 52.Հայ մեծ վիպասան: 53.Քաղաք Հայաստանի Սյունիքի մարզում: 55.«Ժամանակով կատուն ... էր» («Շունն ու կատուն»): 56.Սառը զենք: 57.Հարցական դերանուն: 59.Ես ասեմ, դու ...: 60.Կրակ, հուր, բոց:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Մեծատառ: 9.Ուլունք: 10.Իորի: 11.Հոփկինս: 13.Նպաստ: 16.Վեա: 17.Սիմ: 19.Պլոմբ: 22.Քլինթ: 24.Հռետոր: 25.Պահո: 27.Բուֆալո: 29.Անաբաս: 32.Բանգկոկ: 33.Քառակի: 35.Աբակ: 37.Խոկ: 39.Արինա: 40.Չթյա: 43.Կեղ: 44.Ճչոց: 47.Վաչ: 49.Ակակի: 50.Ալիա: 53.Անոտ: 54.Սեռ: 55.Ալամ: 57.Կուտ: 58.Ուտրեխտ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ջենով: 2.Դաբկա: 3.Ֆաինա: 4.Քուին: 5.Քուրա: 6.Սքոտ: 8.Ռոսիա: 12.Փերի: 14.Պելե: 15.Սումո: 18.Գթալ: 19.Պռունգ: 20.Ոտաբոբիկ: 21.Բրաս: 23.Նպատակ: 26.Հոբի: 28.Ուրախ: 29.Անձ: 30.Ակար: 31.Ականել: 34.Ռոկոկո: 36.Կաղ: 38.Օյա: 41.Թվիստ: 42.Աչառու: 45.Չանա: 46.Ցատկ: 48.Տիար: 51.Ալե: 52.Ամտ: 56.Ախ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445